ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

Ընդունված է 2014 թվականի հունիսի 21-ին

ԲՈՒՍԱՍԱՆԻՏԱՐԻԱՅԻ ՄԱՍԻՆ

Հոդված 3. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները

1. Սույն օրենքում օգտագործվում են հետևյալ հիմնական հասկացությունները.

1) **լիազոր մարմին՝** Սննդամթերքի անվտանգության տեսչական մարմինը.

2) **բույսեր՝** բույսերն ամբողջությամբ և բույսերի առանձին մասերը, այդ թվում՝ սերմերը, սաղմը.

3) **բուսասանիտարիա՝** առողջ միջավայրում առողջ բույսերի, բուսական արտադրանքի և կարգավորվող առարկաների արտադրությանը նպատակաուղղված միջոցառումների համակարգ.

4) **բույսերի կարանտին՝** բույսերի պաշտպանության պետական միջոցառումների համալիր, որի նպատակն է բացահայտել, մեկուսացնել և վերացնել բույսերի, բուսական արտադրանքի և կարգավորվող առարկաների համար կարանտին վնասակար օրգանիզմներով վարակված օջախները.

5) **բուսական արտադրանք՝** բուսական ծագման չվերամշակված նյութ, ինչպես նաև վերամշակված մթերքներ (բացառությամբ ջերմամշակում անցածների), որոնք իրենց

բնույթով կամ վերամշակման եղանակով կարող են ստեղծել վնասակար օրգանիզմների ներթափանցման և (կամ) տարածման վտանգ.

6) **բուսասանիտարական ռիսկի վերլուծություն՝** կենսաբանական և տնտեսական տվյալների գնահատում՝ վնասակար օրգանիզմների կարգավորման անհրաժեշտությունը որոշելու, դրանց դեմ պայքարի բուսասանիտարական միջոցառումներ իրականացնելու կամ բուսասանիտարական միջոցառումներն ուժեղացնելու նպատակով.

7) **բուսասանիտարական կանոններ և նորմեր՝** Հայաստանի Հանրապետության միջազգային պայմանագրերով, Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ նորմատիվ իրավական ակտերով սահմանված բուսասանիտարական պահանջներ.

8) **բույսերի պաշտպանություն՝** բույսերի, բուսական արտադրանքի աճեցման, փորձարկման, պահպանման և փոխադրման վայրերում վնասակար օրգանիզմների դեմ քիմիական և կենսաբանական պայքարի միջոցների օգտագործում, ինչպես նաև շրջակա միջավայրի պահպանության, բույսերի ~~և կենդանիների~~ պաշտպանությանն ուղղված վնասակար օրգանիզմների դեմ պայքարի միջոցառումների համալիր.

9) **բուսասանիտարական զննում՝** բույսերի, բուսական արտադրանքի և կարգավորվող առարկաների ակնադիտական հետազոտություն՝ վնասակար օրգանիզմների առկայությունը կամ բացակայությունը պարզելու նպատակով.

10) **բույսերի կարանտին վնասակար օրգանիզմ՝** վտանգի ենթարկված գոտու համար տնտեսական նշանակություն ունեցող վնասակար օրգանիզմ, որը տվյալ գոտում դեռևս բացակայում է կամ առկա է սահմանափակ, հանդիսանում է պայքարի օբյեկտ և պաշտոնապես հսկվում է.

11) **բույսերի վնասակար օրգանիզմ՝** բույսերի, բուսական արտադրանքի համար հիվանդությունների, վնասատուների և մոլախոտերի ցանկացած տեսակ.

12) **բույսերի կարանտին գոտի՝** տարածք, որտեղ գոյություն ունի կարանտին վնասակար օրգանիզմ, որի հետագա տարածումը կանխարգելելու և վերացնելու նպատակով սահմանվել է կարանտին հսկողություն, և անցկացվում են բուսասանիտարական միջոցառումներ.

13) **բույսերի կարգավորվող ոչ կարանտին վնասակար օրգանիզմ՝** վնասակար օրգանիզմ, որի առկայությունը տնտեսական վնաս է հասցնում բույսերի նպատակային օգտագործմանը, և հսկվում ներմուծող երկրի կողմից.

14) **բույսերի վնասակար օրգանիզմների դեմ պայքար՝** կարանտին վնասակար օրգանիզմների սերնդատվության ճնշման, մեկուսացման և (կամ) վերացման, ինչպես նաև կարգավորվող ոչ կարանտին վնասակար օրգանիզմների կառավարման նպատակով բուսասանիտարական կանոնների պարտադիր կիրառում.

15) **կարգավորվող առարկա (կարանտին օբյեկտ)՝** ցանկացած բույս, բուսական արտադրանք, պահեստային տարածք, փաթեթավորման նյութ, տրանսպորտային միջոց, բեռնարկղ, հող և ցանկացած այլ օբյեկտ կամ նյութ, որը կարող է պարունակել կամ տարածել բույսերի վնասակար օրգանիզմ և որի նկատմամբ անհրաժեշտ է կիրառել բուսասանիտարական միջոցառումներ.

16) **բուսասանիտարական փորձաքննություն՝** բույսերի, բուսական արտադրանքի և այլ կարգավորվող ~~այլ~~ առարկաների լաբորատոր հետազոտություն՝ վնասակար օրգանիզմի առկայությունը կամ բացակայությունը հայտնաբերելու նպատակով.

17) **բուսասանիտարական հաշվառում՝** բուսասանիտարիայի ոլորտում գործունեություն իրականացնող ֆիզիկական և իրավաբանական անձանց վերաբերյալ տվյալների հավաքում, դասակարգում, պահպանում, թարմացում և օգտագործում.

18) **բուսասանիտարական հաշվառման վկայական՝** բուսասանիտարական հաշվառման արդյունքում ֆիզիկական և իրավաբանական անձանց տրվող փաստաթուղթ.

19) **բուսասանիտարական միջոցառում՝** պաշտոնական գործընթաց՝ ուղղված կարանտին վնասակար օրգանիզմի ներթափանցման և (կամ) տարածման կամ կարգավորվող ոչ կարանտին վնասակար օրգանիզմից սպասվող տնտեսական վնասի սահմանափակմանը.

20) **բուսասանիտարական անձնագիր՝** Հայաստանի Հանրապետությունում արտադրված բույսերը, բուսական արտադրանքը, կարգավորվող առարկաներն ուղեկցող

փաստաթուղթ, որը հավաստում է դրանց ստուգված և կարանտին վնասակար օրգանիզմից զերծ լինելու մասին.

21) **խմբաքանակ՝** նույն նշանակության, միևնույն արտադրողի կողմից գործողության նույն սկզբունքով արտադրված (պատրաստված), նույն բաղադրությամբ և անվտանգությունը բնութագրող սահմանված նույն պահանջներին համապատասխանող բուսասանիտարական հսկողության ենթակա ապրանքի որոշակի քանակ, որն ուղեկցվում է ապրանքաուղեկից փաստաթղթով.

22) **բուսասանիտարական ուսումնասիրություն՝** պաշտոնական միջոցառում՝ անցկացված սահմանված ժամանակահատվածում, վնասակար օրգանիզմի սերնդատվության բնութագրի կամ տվյալ գոտում վնասակար օրգանիզմների կազմի որոշման նպատակով.

23) **բուսասանիտարական հսկողության ենթակա ապրանք՝** բույսեր, բուսական արտադրանք, կարգավորվող առարկա.

24) **ագրոքիմիկատներ՝** պարարտանյութեր, քիմիական հողաբարելավիչներ, որոնք նախատեսված են բույսերի սնուցման, հողերի բերրիության բարելավման համար.

~~25) **պեստիցիդ՝** բույսերի պաշտպանության միջոց, ցանկացած նյութ կամ նյութերի խառնուրդ, որը նախատեսված է որոշակի վնասատուների (ներառյալ մարդկանց և կենդանիների հիվանդություններ փոխանցողների, սննդամթերքի, գյուղատնտեսական արտադրանքի, փայտանյութի, կենդանիների կերերի արտադրության, վերամշակման, փոխադրման, իրացման գործընթացներին խանգարող և խոչընդոտող վնասատուների), բույսերի և սնկերի անցանկալի տեսակների կանխարգելման, ոչնչացման կամ պայքարի համար: Պեստիցիդների խմբում ներառված են միջատասպանները (ինսեկտիցիդներ), կրծողների դեմ պայքարի միջոցները (ռոտենդիցիդներ), սնկասպանները (ֆունգիցիդներ), մոլախոտերի դեմ պայքարի համար նախատեսված նյութերը (հերբիցիդներ), բույսերի աճի կարգավորիչները, ֆերոմոնները, դեֆոլիանտները, դեսիկանտները և ֆումիգանտները.~~

25) պեստիցիդ՝ բույսերի պաշտպանության միջոց, ցանկացած նյութ կամ նյութերի խառնուրդ, որը նախատեսված է բույսերի հիվանդությունների, որոշակի վնասատուների (ներառյալ մարդկանց և կենդանիների հիվանդություններ փոխանցողների, սննդամթերքի, չվերամշակված գյուղատնտեսական արտադրանքի, փայտանյութի, կենդանիների կերերի արտադրության, վերամշակման, փոխադրման, իրացման գործընթացները խոչընդոտող վնասատուների) և բույսերի անցանկալի տեսակների տարածման ու զարգացման կանխարգելման կամ ոչնչացման համար: Պեստիցիդների խմբում ներառված են միջատասպանները (ինսեկտիցիդներ), տզասպանները (ակարիցիդներ), կրծողասպանները (ռոտենդիցիդներ), սնկասպանները (ֆունգիցիդներ), մանրէասպանները (բակտերիոցիդներ), նեմատոդասպանները (նեմատոցիդներ), մոլախոտասպանները (հերբիցիդներ), բույսերի աճի կարգավորիչները, բույսերի պատվաստանյութերը, ֆերոմոնները, դեֆոլիանտները, դեսիկանտները, ֆումիգանտները և այլն.

26) **սերմանյութ (տնկանյութ)՝** սորտի վերարտադրության նպատակով օգտագործվող բույս կամ դրա առանձին մաս.

27) **բույսերի պաշտպանության միջոցներ՝** բույսերի վնասակար օրգանիզմների կանխարգելման, դրանց դեմ պայքարի և վերացման համար կիրառվող քիմիական, կենսաբանական միջոցներ.

28) **հրատապ ~~կամ հատուկ~~ դեպք՝** բույսերի կարանտին և ոչ կարանտին վնասակար օրգանիզմների տարածման կամ դրա հետևանքով հասցվող վնասի կանխարգելման կամ բույսերի պաշտպանության կամ հողերի բերրիության բարելավման նպատակով Հայաստանի Հանրապետությունում պեստիցիդների և ագրոքիմիկատների քանակի պահանջարկ, որն ուղղված է բույսերի վնասակար օրգանիզմների դեմ հրատապ պայքարին և բույսերի համար անհրաժեշտ սննդատարրերով ապահովելուն.~~÷~~

29) **ազդող նյութ՝** պեստիցիդի պատրաստուկային ձևի մեջ առկա կենսաբանորեն ակտիվ բաղադրիչ, որն ապահովում է պեստիցիդի նպատակային օգտագործման արդյունավետությունը.

30) **Ֆերոմոն՝** կենդանի օրգանիզմների ներզատիչ և արտազատիչ գեղձերի գործունեության արգասիք հանդիսացող բուրավետ նյութերի անալոգ սինթետիկ քիմիական պատրաստուկ, որը հանդիսանում է պեստիցիդ և կիրառվում է վնասակար օրգանիզմների դեմ պայքարի, դրանց տարածումը, զարգացումը կանխարգելելու, նվազեցնելու, ինչպես նաև վնասակար օրգանիզմների զարգացմանը, թռիչքի շարժին հետևելու և դրանց դեմ միջատասպանների կիրառման ժամկետները որոշելու համար: Ֆերոմոնները վնասակար օրգանիզմների կենսաքիմիական պրոցեսների վրա ազդելու փոխարեն խաթարում են վերջիններիս զուգավորման բնական ցիկլը։

31) **դեֆոլիանտ՝** պեստիցիդ հանդիսացող քիմիական նյութ, որը բույսերի մոտ առաջացնում է արհեստական տերևաթափ: Որոշակի չափաքանակով կիրառման դեպքում բույսերի կենսունակությունը դրանից չի նվազում և գյուղատնտեսության մեջ օգտագործվում է որոշ մշակաբույսերի բերքահավաքի գործընթացը դյուրինացնելու նպատակով։

32) **դեսիկանտ՝** պեստիցիդ հանդիսացող քիմիական նյութ, որն արագացնում է մշակաբույսերի հասունացումը, չորացումը, կիրառվում է որոշ մշակաբույսերի բերքահավաքի գործընթացը դյուրինացնելու նպատակով։

33) **ֆումիգանտ՝** պեստիցիդ հանդիսացող գազային վիճակով քիմիական նյութ, որը կիրառվում է վնասակար օրգանիզմների (միջատների) դեմ պայքար իրականացնելու համար, որը վերջիններիս օրգանիզմ է թափանցում է շնչուղիների միջոցով։

34) **արտադրող՝** ֆիզիկական կամ իրավաբանական անձ կամ անհատ ձեռնարկատեր, որն իրականացնում է պեստիցիդների և ագրոքիմիկատների արտադրություն և համարվում է տվյալ պեստիցիդի կամ ագրոքիմիկատի արտադրության իրավատերը.

35) **արտադրական տարածք**՝ արտադրամաս, որտեղ անմիջապես արտադրողի կողմից կամ արտադրողի պատվերով և վերջինիս կողմից սահմանված համապատասխան բաղադրությամբ իրականացվում է պեստիցիդների կամ ագրոքիմիկատների արտադրություն։

36) **առևտրային անվանում**՝ պեստիցիդի կամ ագրոքիմիկատի անվանում, որի ներքո պեստիցիդը կամ ագրոքիմիկատը մակնշվում է, գրանցվում, գովազդվում և օգտագործվում է տվյալ արտադրանքը նույնատիպ ազդող նյութ կամ սննդատարր պարունակող այլ պեստիցիդներից կամ ագրոքիմիկատներից տարբերվող դարձնելու նպատակով։

37) **քաղաքականություն մշակող լիազոր մարմին՝** բուսասանիտարիայի ոլորտում քաղաքականություն մշակող պետական կառավարման համակարգի մարմին:

2. Բուսասանիտարիայի ոլորտում Կառավարության քաղաքականությունը մշակում է համապատասխան նախարարությունը:

Հոդված 4. Բուսասանիտարիայի խնդիրները

Բուսասանիտարիայի խնդիրներն են՝

1) Հայաստանի Հանրապետության տարածքում բույսերի կարանտին և կարգավորվող ոչ կարանտին վնասակար օրգանիզմի հայտնաբերումը և ոչնչացման կազմակերպման վերահսկողությունը.

2) Հայաստանի Հանրապետության տարածք բույսերի կարանտին վնասակար օրգանիզմի ներթափանցման և տարածման կանխարգելումը՝ բույսերի, բուսական արտադրանքի և այլ կարգավորվող առարկաների բուսասանիտարական զննման, փորձաքննության համար նմուշառման և բույսերի պաշտպանության նպատակով միջոցառումների իրականացումը.

3) բուսասանիտարական կանոնների և նորմերի պահպանումը՝ բույսերի, բուսական արտադրանքի և այլ կարգավորվող առարկաների ներմուծման, արտահանման, վերաարտահանման և տարանցիկ փոխադրման ժամանակ.

4) բույսերի, բուսական արտադրանքի և այլ կարգավորվող առարկաների արտադրության և վերամշակման ընթացքում, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության տարածքում գործող իրացման կետերում բուսասանիտարական կանոնների և նորմերի պահպանումը և դրանց պահպանման նկատմամբ վերահսկողությունը.

5) բույսերի վնասակար օրգանիզմի զանգվածային բազմացումն ու տարածումը ժամանակին կանխատեսելու, ախտորոշելու և կանխարգելելու նպատակով միջոցառումների իրականացումը.

6) գյուղատնտեսական, գեղազարդային մշակաբույսերի, անտառի բուսասանիտարական վիճակի բարելավման, շրջակա միջավայրին, բուսական և կենդանական աշխարհին սպառնացող վնասի բացառման ապահովումը:

Հոդված 5. Բուսասանիտարիայի ոլորտում Կառավարության լիազորությունները

(վերնագիրը փոփ. 23.03.18 ՀՕ-287-Ն)

1. Բուսասանիտարիայի ոլորտում Կառավարության լիազորություններն են՝

1) ոլորտում իրականացվող նպատակային ծրագրերի հաստատումը.

2) բուսասանիտարիայի միջազգային համագործակցության պետական ծրագրերի հաստատումը.

3) պեստիցիդների և ագրոքիմիկատների պետական գրանցման, վերագրանցման և գրանցումից հանելու կարգի սահմանումը.

~~4) պեստիցիդների և ագրոքիմիկատների գրանցման հանձնաժողովի կազմի և գործունեության կարգի սահմանումը.~~

5) պեստիցիդների և ագրոքիմիկատների փորձաքննության անցկացման կարգի և պեստիցիդների և ագրոքիմիկատների ներմուծման կամ արտահանման եզրակացության ձևերի սահմանումը.

6) բույսերի կարանտինի սահմանումը և կարանտինի չեղյալ հայտարարումը.

7) պեստիցիդների և ագրոքիմիկատների արտադրությանը և շրջանառությանը ներկայացվող պահանջների սահմանումը.

8) պեստիցիդի և ագրոքիմիկատի փաթեթավորմանը ներկայացվող պահանջների սահմանումը.

8.1) բուսասանիտարական փորձաքննության նպատակով փորձանմուշ վերցնելու սահմանումը.

8.2) բուսաբուծության ոլորտում աշխատանքի անվտանգության կանոնների հաստատումը

9) սույն օրենքից բխող իրավական այլ ակտերի ընդունումը:

~~**Հոդված 6. Պեստիցիդների և ագրոքիմիկատների պետական գրանցումը, վերագրանցումը և գրանցումից հանելը**~~

-

~~1. Հայաստանի Հանրապետություն ներմուծվող, Հայաստանի Հանրապետությունում արտադրվող և շրջանառվող պեստիցիդները և ագրոքիմիկատները պարտադիր ենթակա են պետական գրանցման:~~

~~2. Պեստիցիդների և ագրոքիմիկատների պետական գրանցումն իրականացնում է լիազորված մարմինը՝ պեստիցիդների և ագրոքիմիկատների գրանցման հանձնաժողովի (այսուհետ՝ հանձնաժողով) եզրակացության հիման վրա:~~

~~3. Հայաստանի Հանրապետությունում արտադրված պեստիցիդների և ագրոքիմիկատների պետական գրանցումն իրականացվում է, եթե՝~~

~~1) դրանք երկու տարի անընդմեջ փորձարկվել են հանրապետության տարբեր բնակլիմայական գոտիներում.~~

~~2) առկա է դրանց մասին հանձնաժողովի դրական եզրակացությունը:~~

~~4. Օտարերկրյա պետություններում արտադրված ու փորձարկված և գործածության մեջ գտնվող պեստիցիդների և ագրոքիմիկատների պետական գրանցումը Հայաստանի Հանրապետությունում իրականացվում է, եթե առկա է դրանց մասին հանձնաժողովի դրական եզրակացությունը:~~

~~5. Պեստիցիդների և ագրոքիմիկատների գրանցման մասին եզրակացություն տալու համար պահանջվում են հետևյալ փաստաթղթերը.~~

~~1) Հայաստանի Հանրապետությունում և օտարերկրյա պետություններում արտադրված և փորձարկված պեստիցիդների և ագրոքիմիկատների համար՝~~

~~ա. պեստիցիդների կամ ագրոքիմիկատների առևտրային անվանումը, ազդող նյութը կամ նյութերը, համագործիչ և օժանդակ նյութերը, յուրաքանչյուր նյութի տոկոսային հարաբերությունը, պատրաստուկային ձևը, արտադրող ֆիրման,~~

~~բ. պեստիցիդների ծախսի նորման, օգտագործման ժամկետը, եղանակը և առանձնահատկությունները, մշակումների կամ սնուցումների քանակը, սպասման ժամկետը, կիրառման սահմանափակումները, կիրառման անվտանգությանը ներկայացվող պահանջները, մշակվող օբյեկտը, վնասակար օրգանիզմը,~~

~~գ. ագրոքիմիկատների սպասման ժամկետը, կիրառման սահմանափակումները, կիրառման անվտանգությանը ներկայացվող պահանջները,~~

~~դ. պեստիցիդների կամ ագրոքիմիկատների հիգիենիկ նորմատիվները (մարդու օրգանիզմում օրվա թույլատրելի սահմանային չափաբաժինը, հողում թույլատրելի սահմանային քանակը (միայն պեստիցիդների մասով), ջրամբարների ջրում թույլատրելի սահմանային քանակը, աշխատանքային գոտում օդում թույլատրելի սահմանային~~

~~քանակը, մթնոլորտային օդում թույլատրելի քանակը և թույլատրելի առավելագույն մակարդակը սննդամթերքում),~~

~~ե. պեստիցիդների կամ ագրոքիմիկատների քիմիական փոխազդեցության, մնացորդային քանակների որոշման մեթոդիկաները, պեստիցիդների՝ ազդող նյութի բյուրեղային տիպօրինակը (ստանդարտը),~~

~~զ. թունավորությունը ոչ նպատակային տեսակների համար (ձկներ, թռչուններ, մեղուներ, հողի միկրոօրգանիզմներ և այլն),~~

~~է. ազդեցությունը վերարտադրողականության վրա,~~

~~ը. մուտագեն, ալերգիկ, ուռուցքածին և մաշկագրգիռ տերատոգեն, գոնադատոքսիկ, սաղմնաթունային հատկությունները,~~

~~թ. սույն օրենքի 8-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝ պեստիցիդի և (կամ) ագրոքիմիկատի թունաբանահիգիենիկ գնահատումը հավաստող փաստաթուղթը (հաշվետվությունը),~~

~~ժ. սույն օրենքի 9-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝ պեստիցիդի և (կամ) ագրոքիմիկատի պիտակի նկարագիրը.~~

~~2) Հայաստանի Հանրապետությունում արտադրված և փոխարկված պեստիցիդների և ագրոքիմիկատների գրանցման համար պահանջվում է նաև՝~~

~~ա. տեղեկանք՝ Հայաստանի Հանրապետության տարբեր հողակլիմայական պայմաններում դրանց երկու տարվա դաշտային և լաբորատոր փորձարկման արդյունքների մասին,~~

~~բ. առողջապահության, բնապահպանության, գյուղատնտեսության, գիտության և կրթության լիազոր մարմնի մասնագիտական դրական եզրակացությունները.~~

~~3) օտարերկրյա պետություններում արտադրված ու փոխարկված և գործածության մեջ գտնվող պեստիցիդների և ագրոքիմիկատների պետական գրանցման համար պահանջվում են նաև գրանցող երկիրը, գրանցման տարեթիվը և համարը, ընդգրկվածությունը գործող անվանացանկում:~~

~~6. Սույն հոդվածի 5-րդ մասի 1-ին կետով պահանջվող փաստաթղթերը պետք է տրամադրված լինեն արտադրողի կամ նրա պաշտոնական ներկայացուցչի կամ դիստրիբյուտորի կողմից:~~

~~7. Հանձնաժողովի եզրակացության և ներկայացվող փաստաթղթերի ձևերը հաստատում է լիազոր մարմինը:~~

~~8. Հայաստանի Հանրապետությունում արտադրված պեստիցիդների և ագրոքիմիկատների փորձարկումն իրականացվում է դրանք գրանցման ներկայացնող ֆիզիկական կամ իրավաբանական անձանց միջոցների հաշվին:~~

~~9. Լիազոր մարմինը հանձնաժողովի եզրակացությունն ստանալուց հետո՝ եռօրյա ժամկետում, կայացնում է տվյալ պեստիցիդները կամ ագրոքիմիկատները գրանցելու և Հայաստանի Հանրապետությունում օգտագործման համար թույլատրված պեստիցիդների և ագրոքիմիկատների անվանացանկում ընդգրկելու կամ գրանցումը մերժելու մասին որոշում և տեղյակ է պահում հայտատուին:~~

~~10. Պեստիցիդները գրանցման ներկայացնող ֆիզիկական կամ իրավաբանական անձանց տրամադրած տվյալները պաշտպանված են և հրապարակման ենթակա չեն, եթե փաստաթղթային փաթեթի ներկայացման ժամանակ դիմողը պահանջել է ազդող նյութի, հակաթույնի կամ համագործչի, օժանդակ նյութերի և պեստիցիդների վերաբերյալ փորձերի և հետազոտությունների արդյունքների մասին տվյալների հավաստում այն մասին, որ փորձերի և հետազոտությունների արդյունքների վերաբերյալ տվյալների պաշտպանության ժամկետ երբեք չի սահմանվել, կամ սահմանված որևէ ժամկետ չի լրացել:~~

~~11. Պեստիցիդները և ագրոքիմիկատները գրանցվում են հինգ տարի ժամկետով, և գրանցման ներկայացնող ֆիզիկական կամ իրավաբանական անձանց տրվում է գրանցման վկայական:~~

~~12. Պեստիցիդները և ագրոքիմիկատները ենթակա են վերագրանցման, եթե՝~~

~~1) լրացել է գրանցման ժամկետը, և վերագրանցման մասին հայտ է ներկայացվել.~~

~~2) մինչև գրանցման ժամկետի լրանալը տեղի է ունեցել պեստիցիդների կամ ագրոքիմիկատների ազդող կամ համագործիչ կամ օժանդակ նյութերի կամ դրանց տոկոսային հարաբերությունների փոփոխություն:~~

~~13. Վերագրանցումն իրականացվում է սույն հոդվածով սահմանված գրանցման դրույթներին համապատասխան:~~

~~14. Պեստիցիդները և ագրոքիմիկատները գրանցումից հանվում են, եթե լրացել է գրանցման ժամկետը, կամ գրանցման վկայական ստացած անձը ներկայացրել է գրանցումից հանելու հայտ կամ ազդող կամ համագործիչ, կամ օժանդակ նյութերից որևէ մեկը ներառվել է Հայաստանի Հանրապետությունում արգելված քիմիական նյութերի և թունաքիմիկատների ցանկում:~~

Հոդված 6. Պեստիցիդների պետական գրանցումը և վերագրանցումը

1. Հայաստանի Հանրապետությունում արտադրվող, Հայաստանի Հանրապետություն ներմուծվող և շրջանառվող պեստիցիդները պարտադիր ենթակա են պետական գրանցման (այսուհետ՝ գրանցում), բացառությամբ սույն օրենքով սահմանված հրատապ դեպքում քաղաքականություն մշակող լիազոր մարմնի կողմից ընդունվող իրավական ակտի հիման վրա ներմուծված պեստիցիդների:

2. Հայաստանի Հանրապետությունում պեստիցիդները գրանցվում են ընդհանուր և պարզեցված ընթացակարգերով: Պարզեցված ընթացակարգով գրանցումն իրականացվում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած դեպքերում:

3. Պեստիցիդների գրանցումն իրականացնում է լիազոր մարմինը:

4. Լիազոր մարմինը պեստիցիդների ընդհանուր ընթացակարգով գրանցումն իրականացնում է հայտը ներկայացնելուց հետո քսան աշխատանքային օրվա

ընթացքում, իսկ պարզեցված ընթացակարգով՝ յոթ աշխատանքային օրվա ընթացքում:

5. Հայտում կամ կից փաստաթղթերում թերությունների (վրիպակների, անճշտությունների, անհամապատասխանությունների, թվաբանական սխալների և նման այլ բացթողումների) առկայության, ինչպես նաև փաստաթղթերը թերի լինելու դեպքում Լիազոր մարմինը դրանք հայտնաբերելու պահից 2 աշխատանքային օրվա ընթացքում առաջարկում է հայտատուին 5 աշխատանքային օրվա ընթացքում շտկել թերությունները, իսկ սույն հոդվածի 4-րդ մասում նշված ժամկետները երկարաձգում են 5 աշխատանքային օրով:

6. Հայաստանի Հանրապետությունում արտադրված պեստիցիդների գրանցումն իրականացվում է ընդհանուր ընթացակարգով: Պեստիցիդների գրանցման համար լիազոր մարմին ներկայացվում են հետևյալ տեղեկություններ պարունակող փաստաթղթերը՝

1) պեստիցիդի առևտրային անվանումը, ազդող նյութը, դրա տոկոսային հարաբերությունը կամ պարունակությունը միավոր ծավալում և թույլատրելի շեղումները, համագործիչ և օժանդակ նյութերը, դրանցից յուրաքանչյուրի տոկոսային հարաբերությունը կամ պարունակությունը միավոր ծավալում, պատրաստուկային ձևը, արտադրողի անվանումը, հասցեն (իրավաբանական անձի դեպքում՝ իրավաբանական հասցեն և արտադրողի կողմից ներկայացված արտադրական տարածքը գտնվելու երկիրը, ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ անուն, ազգանուն, հայրանուն, հաշվառման հասցեն և արտադրողի կողմից ներկայացված արտադրական տարածքը գտնվելու երկիրը).

2) պեստիցիդի ծախսի նորման, օգտագործման ժամկետը, եղանակը և առանձնահատկությունները, մշակվող օբյեկտը, վնասակար օրգանիզմը, մշակումների քանակը, սպասման ժամկետը, կիրառման սահմանափակումները, կիրառման անվտանգությանը ներկայացվող պահանջները.

3) պեստիցիդի հիգիենիկ նորմատիվները (մարդու օրգանիզմում օրվա թույլատրելի սահմանային չափաբաժինը, հողում թույլատրելի սահմանային քանակը, ջրամբարների ջրում թույլատրելի սահմանային քանակը, աշխատանքային գոտում օդում թույլատրելի սահմանային քանակը, մթնոլորտային օդում թույլատրելի քանակը և թույլատրելի առավելագույն մակարդակը սննդամթերքում).

4) պեստիցիդի քիմիական փորձաքննության, ազդող նյութի մնացորդային քանակների որոշման մեթոդիկաները, պեստիցիդների՝ ազդող նյութի բյուրեղային տիպօրինակը (ստանդարտը), եթե տվյալ նյութի փորձաքննության մեթոդիկաներով բյուրեղային տիպօրինակն անհրաժեշտ է.

5) պեստիցիդի թունունակությունը ոչ նպատակային տեսակների համար (ձկներ, թռչուններ, մեղուներ, հողի միկրոօրգանիզմներ և այլն).

6) պեստիցիդի ազդեցությունը վերարտադրողականության վրա.

7) պեստիցիդի մուտագեն, ալերգիկ, ուռուցքածին և մաշկագրգիռ, տերատոգեն, գոնադատոքսիկ, սաղմնաթունային հատկությունները.

8) պեստիցիդի թունաբանահիգիենիկ գնահատումը հավաստող փաստաթուղթը.

9) սույն օրենքի 9-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝ պեստիցիդի պիտակի նկարագիրը.

10) տեղեկանք՝ Հայաստանի Հանրապետությունում դրանց երկու տարվա անընդմեջ դաշտային և լաբորատոր փորձարկման արդյունքների մասին, որը տրամադրվում է քաղաքականություն մշակող լիազոր մարմնի կողմից հաստատված ցանկում նշված գիտական և կրթական կազմակերպությունների կողմից՝ քաղաքականություն մշակող լիազոր մարմնի կողմից հաստատված ձևին համապատասխան:

7. Օտարերկրյա պետություններում արտադրված պեստիցիդները գրանցվում են ընդհանուր և պարզեցված ընթացակարգերով.

1) ընդհանուր ընթացակարգով գրանցման համար պահանջվում են՝

ա. սույն հոդվածի 6-րդ մասի 1-9-րդ կետերով սահմանված փաստաթղթերը.

բ. գրանցող երկիրը, գրանցման տարեթիվը և համարը, ընդգրկվածությունը գործող անվանացանկում .

2) պարզեցված ընթացակարգով գրանցման համար պահանջվում են՝

ա. սույն հոդվածի 6-րդ մասի 1-4-րդ և 9-րդ կետերով սահմանված փաստաթղթերը.

բ. գրանցող երկիրը, գրանցման տարեթիվը և համարը, ընդգրկվածությունը գործող անվանացանկում, բացառությամբ Կառավարության սահմանած դեպքերի:

8. Լիազոր մարմինը փաստաթղթերի ուսումնասիրության արդյունքում կայացնում է տվյալ պեստիցիդը գրանցելու և Հայաստանի Հանրապետությունում օգտագործման համար թույլատրված պեստիցիդների և ագրոքիմիկատների անվանացանկում ընդգրկելու կամ գրանցումը մերժելու մասին որոշում և թղթային կամ էլեկտրոնային տարբերակներով երեք աշխատանքային օրվա ընթացքում պատշաճ կերպով տեղեկացնում է հայտատուին:

9. Լիազոր մարմնի կողմից պեստիցիդների գրանցումը մերժվում է, եթե՝

1) պեստիցիդի ազդող նյութը կամ համագործիչ կամ օժանդակ նյութերից որևէ մեկը ներառված է Հայաստանի Հանրապետությունում արգելված քիմիական նյութերի և թունաքիմիկատների ցանկում.

2) հայտատուն սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված ժամկետում չի շտկել հայտնաբերված թերությունները.

3) պեստիցիդը գրանցված չէ արտադրող երկրում, բացառությամբ պարզեցված ընթացակարգով Կառավարության սահմանած դեպքի հիման վրա գրանցված պեստիցիդի:

10. Պեստիցիդի գրանցումը մերժելու մասին որոշումը կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով:

11. Պեստիցիդները ենթակա են վերագրանցման, եթե՝

1) մինչև գրանցման ժամկետի լրանալն առնվազն 60 օր առաջ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից վերագրանցման

մասին հայտ է ներկայացվել և պեստիցիդի ազդող կամ համագործիչ կամ օժանդակ նյութերի կամ դրանց տոկոսային հարաբերությունը չի փոփոխվել .

2) մինչև գրանցման ժամկետի լրանալը տեղի է ունեցել պեստիցիդների ազդող կամ համագործիչ կամ օժանդակ նյութերի կամ դրանց տոկոսային հարաբերությունների փոփոխություն.

12. Սույն հոդվածի 11-րդ մասով սահմանված վերագրանցումը կատարվում է այն դեպքում, եթե վերագրանցման պահին պեստիցիդը արտադրող երկրում գրանցված է, բացառությամբ պարզեցված ընթացակարգով Կառավարության սահմանած դեպքի հիման վրա գրանցված պեստիցիդի:

13. Սույն հոդվածի 11-րդ մասի 1-ին կետով սահմանված դեպքում վերագրանցումն իրականացվում է ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից ներկայացված հայտի համաձայն, որին կից ներկայացվում է տեղեկատվություն՝ պեստիցիդների առևտրային անվանման, ազդող նյութի, դրանց տոկոսային հարաբերության կամ միավոր ծավալում պարունակության և թույլատրելի շեղումների, համագործիչ և օժանդակ նյութերի, դրանցից յուրաքանչյուրի տոկոսային հարաբերության կամ միավոր ծավալում պարունակության, պատրաստուկային ձևի, արտադրողի անվանման, հասցեի (իրավաբանական անձի դեպքում՝ իրավաբանական հասցեի և արտադրողի կողմից ներկայացված արտադրական տարածքը գտնվելու երկրի, ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ անուն, ազգանուն, հայրանուն, հաշվառման հասցեի և արտադրողի կողմից ներկայացված արտադրական տարածքը գտնվելու երկրի) վերաբերյալ:

14. Սույն հոդվածի 11-րդ մասի 2-րդ կետով սահմանված դեպքում վերագրանցումն իրականացվում է սույն հոդվածով սահմանված գրանցման դրույթներին համապատասխան:

Հոդված 6.1. Ագրոքիմիկատների պետական գրանցումը և վերագրանցումը

1. Հայաստանի Հանրապետությունում արտադրվող, Հայաստանի Հանրապետություն ներմուծվող և շրջանառվող ագրոքիմիկատները պարտադիր ենթակա են պետական գրանցման (այսուհետ՝ գրանցում), բացառությամբ սույն օրենքով սահմանված հրատապ դեպքում բաղաքականություն մշակող լիազոր մարմնի կողմից ընդունվող իրավական ակտի հիման վրա ներմուծված ագրոքիմիկատների:

2. Հայաստանի Հանրապետությունում ագրոքիմիկատները գրանցվում են ընդհանուր և պարզեցված ընթացակարգերով: Պարզեցված ընթացակարգով գրանցումն իրականացվում է Կառավարության սահմանած դեպքերում:

3. Ագրոքիմիկատների գրանցումն իրականացնում է լիազոր մարմինը:

4. Լիազոր մարմինը ագրոքիմիկատների ընդհանուր ընթացակարգով գրանցումն իրականացնում է հայտը ներկայացնելուց հետո քսան աշխատանքային օրվա ընթացքում, իսկ պարզեցված ընթացակարգով՝ յոթ աշխատանքային օրվա ընթացքում:

5. Հայտում կամ կից փաստաթղթերում թերությունների (վրիպակների, անճշտությունների, անհամապատասխանությունների, թվաբանական սխալների և նման այլ բացթողումների) առկայության, ինչպես նաև փաստաթղթերը թերի լինելու դեպքում լիազոր մարմինը դրանք հայտնաբերելու պահից 2 աշխատանքային օրվա ընթացքում առաջարկում է հայտատուին 5 աշխատանքային օրվա ընթացքում շտկել թերությունները, իսկ սույն հոդվածի 4-րդ մասում նշված ժամկետները երկարաձգվում են 5 աշխատանքային օրով:

6. Հայաստանի Հանրապետությունում արտադրված ագրոքիմիկատների գրանցումն իրականացվում է ընդհանուր ընթացակարգով: Գրանցման համար լիազոր մարմին ներկայացվում են հետևյալ տեղեկությունները պարունակող փաստաթղթերը.

1) ագրոքիմիկատի՝ առևտրային անվանումը, սննդատարրերը, դրանց տոկոսային հարաբերությունը կամ պարունակությունը միավոր ծավալում և թույլատրելի շեղումները, պատրաստուկային ձևը, արտադրողի անվանումը, հասցեն (իրավաբանական անձի

դեպքում՝ իրավաբանական հասցեն և արտադրողի կողմից ներկայացված արտադրական տարածքը գտնվելու երկիրը, ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ անուն, ազգանուն, հայրանուն, հաշվառման հասցեն և արտադրողի կողմից ներկայացված արտադրական տարածքը գտնվելու երկիրը).

2) ագրոքիմիկատի կիրառման եղանակները, կիրառման անվտանգությանը ներկայացվող պահանջները.

3) աշխատանքային գոտում օդում ագրոքիմիկատի թույլատրելի սահմանային քանակը.

4) ագրոքիմիկատի սննդատարրերի քիմիական փորձաքննության մեթոդիկան.

5) ագրոքիմիկատի թունաբանահիգիենիկ գնահատումը հավաստող փաստաթուղթը, բացառությամբ սույն օրենքի 8-րդ հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքի.

6) սույն օրենքի 9-րդ հոդվածի պահանջներին համապատասխան՝ ագրոքիմիկատի պիտակի նկարագիրը:

7. Օտարերկրյա պետություններում արտադրված, փորձարկված և գործածության մեջ գտնվող ագրոքիմիկատները գրանցվում են ընդհանուր և պարզեցված ընթացակարգերով.

1) ընդհանուր ընթացակարգով գրանցման համար պահանջվում են՝

ա. սույն հոդվածի 6-րդ մասով սահմանված փաստաթղթերը.

բ. գրանցող երկիրը, գրանցման տարեթիվը և համարը, ընդգրկվածությունը գործող անվանացանկում.

2) պարզեցված ընթացակարգով գրանցման համար պահանջվում են՝

ա) սույն հոդվածի 6-րդ մասի 1-3-րդ և 6-րդ կետերով սահմանված փաստաթղթերը.

բ) գրանցող երկիրը, գրանցման տարեթիվը և համարը, ընդգրկվածությունը գործող անվանացանկում, բացառությամբ Կառավարության սահմանած դեպքերի:

8. Լիազոր մարմինն իրականացված ուսումնասիրության արդյունքով կայացնում է տվյալ ագրոքիմիկատը գրանցելու և Հայաստանի Հանրապետությունում օգտագործման համար թույլատրված պեստիցիդների և ագրոքիմիկատների անվանացանկում

ընդգրկելու կամ գրանցումը մերժելու մասին որոշում և թղթային կամ էլեկտրոնային տարբերակներով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ժամկետում պատշաճ կերպով տեղեկացվում է հայտատուին:

9. Լիազոր մարմինը մերժում է ագրոքիմիկատների գրանցումը եթե՝

1) ագրոքիմիկատի սննդատարրերից որևէ մեկը ներառված է Հայաստանի Հանրապետությունում արգելված քիմիական նյութերի և թունաքիմիկատների ցանկում.

2) հայտատուն սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված ժամկետում չի շտկել հայտնաբերված թերությունները:

10. Ագրոքիմիկատի գրանցումը մերժելու մասին որոշումը կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով:

11. Ագրոքիմիկատները ենթակա են վերագրանցման, եթե՝

1) մինչև գրանցման ժամկետի լրանալն առնվազն 60 օր առաջ ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից վերագրանցման մասին հայտ է ներկայացվել և ագրոքիմիկատի բաղադրությունը՝ սննդատարրերի կազմը, դրանցից յուրաքանչյուրի տոկոսային հարաբերությունը չի փոփոխվել.

2) մինչև գրանցման ժամկետի լրանալը տեղի է ունեցել ագրոքիմիկատների սննդատարրերի կազմի կամ դրանց տոկոսային հարաբերությունների փոփոխություն.

12. Սույն հոդվածի 11-րդ մասով սահմանված վերագրանցումը կատարվում է այն դեպքում, եթե վերագրանցման պահին ագրոքիմիկատը արտադրող երկրում գրանցված է, բացառությամբ պարզեցված ընթացակարգով Կառավարության սահմանած դեպքի հիման վրա գրանցված ագրոքիմիկատի :

13. Սույն հոդվածի 11-րդ մասի 1-ին կետով սահմանված դեպքում վերագրանցումն իրականացվում է ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատիրոջ կողմից ներկայացված հայտի համաձայն, որին կից ներկայացվում է տեղեկատվություն՝ ագրոքիմիկատների առևտրային անվանման, սննդատարրերի, դրանց տոկոսային հարաբերության կամ միավոր ծավալում պարունակության և թույլատրելի շեղումների, պատրաստուկային ձևի, արտադրողի անվանման, հասցեի

(իրավաբանական անձի դեպքում՝ իրավաբանական հասցեի և արտադրողի կողմից ներկայացված արտադրական տարածքը գտնվելու երկրի, ֆիզիկական անձի կամ անհատ ձեռնարկատիրոջ դեպքում՝ անուն, ազգանուն, հայրանուն, հաշվառման հասցեի և արտադրողի կողմից ներկայացված արտադրական տարածքը գտնվելու երկրի) վերաբերյալ:

14. Սույն հոդվածի 11-րդ մասի 2-րդ կետով սահմանված դեպքում ագրոքիմիկատի վերագրանցումն իրականացվում է սույն հոդվածով սահմանված գրանցման դրույթներին համապատասխան:

Հոդված 6.2. Պեստիցիդների և ագրոքիմիկատների պետական գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերի տրամադրումը, պետական գրանցման ժամկետը և պետական գրանցումից հանելը

1. Սույն օրենքի 6-րդ հոդվածի 6-րդ և 7-րդ և 6.1-ին հոդվածի 6-րդ և 7-րդ մասերով պահանջվող փաստաթղթերը պետք է տրամադրված լինեն արտադրողի կողմից:

2. Հայաստանի Հանրապետությունում արտադրված պեստիցիդների և ագրոքիմիկատների փորձարկումն իրականացվում է դրանք պետական գրանցման ներկայացնող ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատիրոջ միջոցների հաշվին:

3. Հայաստանի Հանրապետությունում պեստիցիդները գրանցվում են հինգ տարի ժամկետով, իսկ ագրոքիմիկատները գրանցվում են տասը տարի ժամկետով, և գրանցման ներկայացնող ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատիրոջը տրվում է գրանցման վկայական:

4. Պեստիցիդները և ագրոքիմիկատները պետական գրանցումից հանվում են, եթե՝

1) լրացել է պետական գրանցման ժամկետը, սակայն թույլատրվում է դրանց իրացումը կամ օգտագործումը կամ արտահանումը մինչև պիտանելիության ժամկետի ավարտը.

2) պետական գրանցման վկայական ստացած անձը ներկայացրել է գրանցումից հանելու հայտ.

3) պեստիցիդի կամ ագրոքիմիկատի ազդող կամ համագործիչ, կամ օժանդակ նյութերից որևէ մեկը ներառվել է Հայաստանի Հանրապետությունում արգելված քիմիական նյութերի և թունաքիմիկատների ցանկում.

4) գրանցման համար հիմք հանդիսացող փաստաթղթերում հայտնաբերվել են անհամապատասխանություններ օրենսդրությամբ սահմանված պահանջներին կամ կեղծ տեղեկություններ.

5) առկա են պեստիցիդի կամ ագրոքիմիկատի գրանցումը անվավեր ճանաչելու համար «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքով նախատեսված այլ հիմքեր:

Հոդված 7. Հայաստանի Հանրապետությունում արտադրվող և Հայաստանի Հանրապետություն ներմուծվող պեստիցիդներին և ագրոքիմիկատներին ներկայացվող պահանջները

1. Ներմուծման և շրջանառության փուլերում պեստիցիդները և ագրոքիմիկատները պետք է բավարարեն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված պահանջները:

2. Արգելվում է ներմուծել, արտադրել, իրացնել և օգտագործել Հայաստանի Հանրապետությունում չգրանցված պեստիցիդներ և ագրոքիմիկատներ, բացառությամբ սույն օրենքով սահմանված հրատապ ~~կամ հատուկ~~ դեպքում քաղաքականություն մշակող լիազոր մարմնի կողմից ընդունվող իրավական ակտի հիման վրա ներմուծված պեստիցիդների և ագրոքիմիկատների:

3. Արգելվում է Հայաստանի Հանրապետություն ներմուծել արտադրողի սահմանած պիտանելիության ժամկետի մեկ երրորդից պակաս պիտանելիության ժամկետ ունեցող պեստիցիդներ և ագրոքիմիկատներ:

~~Հոդված 8. Պեստիցիդների և ագրոքիմիկատների թունաբանահիգիենիկ գնահատումը~~

-

~~1. Պեստիցիդները և ագրոքիմիկատները ենթակա են պարտադիր թունաբանահիգիենիկ գնահատման, որն իրականացնում են անհրաժեշտ գիտական ու նյութական ապահովվածություն և համապատասխան որակավորված մասնագետներ ունեցող՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով նման լիազորություններ ունեցող կազմակերպությունները:~~

~~2. Պեստիցիդների և ագրոքիմիկատների թունաբանահիգիենիկ գնահատման անցկացման կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության առողջապահության բնագավառի լիազոր մարմինը:~~

~~3. Կատարվող փորձարկումների կարգերի, ըստ գյուղատնտեսական մշակաբույսերի տեսակների, պատրաստուկի ծախսի նորմաների և կիրառման տեխնոլոգիաների, պեստիցիդների և ագրոքիմիկատների կիրառման մասին հրահանգների ու հանձնարարականների համընկնման դեպքում Հայաստանի Հանրապետությունում պեստիցիդների և ագրոքիմիկատների գրանցման ընթացքում կարող են ընդունվել այլ երկրներում իրականացված փորձարկման արդյունքները: Երկրների ցանկը հաստատում է Կառավարությունը:~~

~~4. Թունաբանահիգիենիկ գնահատման սկզբունքներն են՝~~

~~1) թունաբանահիգիենիկ գնահատման եզրակացությունների գիտական հիմնավորումը.~~

~~2) գնահատող փորձագետների անկախությունը՝ լիազորությունների իրականացման ժամանակ.~~

~~3) գնահատման ամբողջական իրականացումը.~~

~~4) հետազոտվող նյութերի գաղտնիության ապահովումը:~~

~~5. Պեստիցիդի և (կամ) ագրոքիմիկատի թունաբանահիգիենիկ գնահատման արդյունքում կազմվում է պեստիցիդի և (կամ) ագրոքիմիկատի անվտանգությունը հիմնավորող փաստաթուղթ:~~

~~6. Որևէ բուսական արտադրանքի շրջանառության համար նախատեսված պեստիցիդի ազդող նյութի հետազոտության սահմանված մեթոդի բացակայության դեպքում նշված բուսական արտադրանքը չի ներառվում այն մշակաբույսերի ցանկում, որոնցում տվյալ պատրաստուկը կարող էր օգտագործվել:~~

Հոդված 8. Պեստիցիդների և ագրոքիմիկատների թունաբանահիգիենիկ գնահատումը

1. Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցման ներկայացված պեստիցիդները և ագրոքիմիկատները ենթակա են պարտադիր թունաբանահիգիենիկ գնահատման, բացառությամբ սույն օրենքով սահմանված պարզեցված ընթացակարգով պեստիցիդների և ագրոքիմիկատների գրանցման և սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված դեպքերի:

2. Պեստիցիդների և ագրոքիմիկատների թունաբանահիգիենիկ գնահատումն իրականացնում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով թունաբանահիգիենիկ գնահատում իրականացնելու համար հավատարմագրված կազմակերպությունները:

3. Գոմաղբի, բուսահողի, թռչնաղբի, կենսահումուսի, կենսահեղուկի, տորֆի, կոմպոստների և օրգանական ծագման այլ ագրոքիմիկատների գրանցումը կարող է կատարվել առանց թունաբանահիգիենիկ գնահատման:

4. Հայաստանի Հանրապետությունում պեստիցիդների և ագրոքիմիկատների թունաբանահիգիենիկ գնահատումն իրականացվում է փաստաթղթային և լաբորատոր հետազոտությունների արդյունքների հիման վրա: Ընդ որում, կարող են նաև հիմք

ընդունվել այլ երկրներում իրականացված փորձարկման արդյունքները: Երկրների ցանկը հաստատում է Կառավարությունը:

5. Պեստիցիդների և ագրոքիմիկատների թունաբանահիգիենիկ գնահատման անցկացման կարգը սահմանում է Կառավարությունը:

Հոդված 9. Պեստիցիդների և ագրոքիմիկատների փաթեթավորմանը և մակնշմանը ներկայացվող պահանջները

1. Հայաստանի Հանրապետությունում շրջանառվող չափածրարված պեստիցիդների և ագրոքիմիկատների վրա հայերեն մակնշումը պարտադիր է:

2. Մակնշումը զետեղվում է անմիջապես տարայի և (կամ) տարայի պահպանումը ապահովող փաթեթվածքի նյութին ամրացված պիտակի վրա:

3. Պեստիցիդների և ագրոքիմիկատների մակնշումը պետք է ներառի՝

1) պեստիցիդի կամ ագրոքիմիկատի անվանումը և նշանակությունը.

2) ազդող նյութի անվանումը, պարունակությունը.

3) արտադրողի անվանումը և գտնվելու վայրը (երկիրը, իրավաբանական հասցեն).

4) պատրաստուկային ձևը.

5) տարայի ծավալը և (կամ) զտաքաշը.

6) տեղեկություն անվտանգության մասին.

7) մանիպուլյացիոն նշանները.

8) տեղեկատվություն կիրառման վերաբերյալ (մշակվող մշակաբույսերը կամ օբյեկտը, ծախսի նորմաները, մշակումների առավելագույն քանակը, պարբերականությունը, վնասակար օրգանիզմը, «սպասման ժամկետները»).

9) գրանցման վկայականի համարը, բացառությամբ սույն օրենքով սահմանված հրատապ ~~կամ հատուկ~~ դեպքում քաղաքականություն մշակող լիազոր մարմնի կողմից

ընդունվող իրավական ակտի հիման վրա պեստիցիդների և ագրոքիմիկատների ներմուծման դեպքի.

10) արտադրության ժամկետը (ամիսը, տարեթիվը).

11) պահման պայմանները.

12) պիտանելիության ժամկետը.

13) նույնականացման կոդը (շտրիխը).

14) կիրառման սահմանափակումները (այլ պեստիցիդների և ագրոքիմիկատների հետ համատեղելիություն, բուսաթունունակություն (ֆիտոտոքսիկություն).

15) անվտանգության կանոնները աշխատելիս, տեղափոխելիս և պահպանելիս.

16) թափված պեստիցիդների և ագրոքիմիկատների վնասազերծման եղանակները.

17) դատարկ տարաների վնասազերծման և (կամ) ոչնչացման եղանակները.

18) սուր թունավորումների կլինիկական պատկերը (տվյալների առկայության դեպքում), խորհուրդներ բժշկին, այդ թվում՝ հակաթույնի անվանումը (առկայության դեպքում).

19) առաջին օգնությունը թունավորման դեպքում:

4. Երկաթուղային ցիստերնների և ավտոցիստերնների մակնշումը զետեղվում է երկաթուղային և ավտոմոբիլային տրանսպորտով բեռների տեղափոխման կանոններին համապատասխան:

5. Պեստիցիդների և ագրոքիմիկատների փաթեթավորման, սպառողական տարայի, պիտակի, լրացուցիչ պիտակի կամ ներդիրի վրա զետեղված տեղեկությունները պետք է լինեն ընթեռնելի, ամբողջական ու հավաստի:

6. Մակնշումը պետք է կայուն լինի քիմիական նյութերի, կլիմայական գործոնների ազդեցության նկատմամբ, պահպանվի պեստիցիդի և ագրոքիմիկատի երաշխիքային պահպանման ժամկետի ընթացքում:

Հոդված 10. Հողերի մշակությունը, պեստիցիդների և ագրոքիմիկատների օգտագործումը, մոլախոտային բուսականության դեմ տարվող պայքարը

1. Գյուղատնտեսական նշանակության հողերի մշակությամբ զբաղվող ֆիզիկական և իրավաբանական անձինք պարտավոր են իրականացնել՝

1) հողի հիմնական, նախացանքային, հետցանքային և միջշարքային մշակության համալիր միջոցառումներ.

2) հողի հողատարումը կանխարգելող համալիր միջոցառումներ.

3) հողի երկրորդային աղակալումը և ճահճացումը կանխարգելող համալիր միջոցառումներ.

4) հողի խորքային ջրերի թույլատրելի մակարդակի պահպանումը, ինչպես նաև մշակաբույսերի ոռոգման ընթացքում գերխոնավության կանխարգելումը.

5) հողի օգտակար հատկանիշների պահպանման համալիր միջոցառումներ.

6) հողը պեստիցիդների, ագրոքիմիկատների և կենսապատրաստուկների վնասակար մնացորդների աղտոտումից պաշտպանելու միջոցառումներ.

7) հողի հիմնական սննդատարրերի (ազոտ, ֆոսֆոր, կալիում) պակասը լրացնող համալիր միջոցառումներ.

8) պարարտացման համալիր միջոցառումների կատարման ընթացքում բուսասանիտարական անվտանգության ապահովումը:

1[1] Հայաստանի Հանրապետությունում պեստիցիդների և ագրոքիմիկատների արտադրությունը և վաճառքն օրենքով սահմանված ծանուցման ենթակա գործունեության տեսակներ են:

2. Արգելվում են՝

1) Հայաստանի Հանրապետությունում օգտագործման համար թույլատրված պեստիցիդների և ագրոքիմիկատների անվանացանկում չընդգրկված, բացառությամբ սույն օրենքով սահմանված հրատապ ~~կամ հատուկ~~ դեպքում քաղաքականություն մշակող

լիազոր մարմնի կողմից ընդունվող իրավական ակտի հիման վրա ներմուծված պեստիցիդների և ագրոքիմիկատների, ինչպես նաև ընդգրկված, բայց ժամկետանց և անորակ պեստիցիդների և ագրոքիմիկատների ներմուծումը, իրացումն ու օգտագործումը.

2) բուսասանիտարական նորմերին չհամապատասխանող պահեստներում ու շինություններում պեստիցիդների և ագրոքիմիկատների պահպանումը.

3) պահեստներում պեստիցիդների ու ագրոքիմիկատների և սննդամթերքի համատեղ պահպանումը, փոխադրամիջոցներով դրանց միաժամանակյա փոխադրումը.

4) պեստիցիդների և ագրոքիմիկատների մնացորդային առավելագույն քանակը գերազանցող բուսաբուծական մթերքների իրացումը.

5) պեստիցիդների և ագրոքիմիկատների օգտագործման համար թույլատրելի քանակների գերազանցումը:

(10-րդ հոդվածը լրաց. 15.06.23 ՀՕ-220-Ն)

Հոդված 12. Բույսերի կարանտին և կարգավորվող ոչ կարանտին վնասակար օրգանիզմի դեմ տարվող պայքարը

1. Բուսասանիտարիայի ոլորտում ֆիզիկական և իրավաբանական անձինք պարտավոր են ապահովել՝

1) գյուղատնտեսական հողատեսքերի, ցանքերի և տնկարկների կարանտին և կարգավորվող ոչ կարանտին վնասակար օրգանիզմների դեմ պայքարի համալիր միջոցառումների իրականացումը.

2) հողում և բուսական արտադրանքում պեստիցիդների և ագրոքիմիկատների թույլատրելի մնացորդային առավելագույն քանակի չգերազանցումը.

3) բուսասանիտարական վերահսկողության ենթակա բույսերի, բուսական արտադրանքի և այլ կարգավորվող ~~այլ~~ առարկաների բուսասանիտարական զննումը, ստուգումը և փորձաքննությունը:

2. Արգելվում է՝

1) Հայաստանի Հանրապետությունում պետական գրանցում չստացած, բացառությամբ սույն օրենքով սահմանված հրատապ ~~կամ հատուկ~~ դեպքում քաղաքականություն մշակող լիազոր մարմնի կողմից ընդունվող իրավական ակտի հիման վրա ներմուծվածների, օգտագործումից հանված, ժամկետանց, անորակ և արգելված, բնակչության առողջության և շրջակա միջավայրի համար վտանգավոր պեստիցիդների և ագրոքիմիկատների օգտագործումը.

2) մինչև 18 տարեկան, պարտադիր նախնական և պարբերական բժշկական զննություն չանցած անձանց, ինչպես նաև հղի և մինչև մեկ տարեկան երեխա խնամող կանանց ներգրավումը պեստիցիդների հետ կատարվող աշխատանքներում.

3) ախտահանված սերմերի՝ որպես սնունդ, անասնակեր օգտագործումը.

4) կարանտին հայտարարված տարածքներից բուսասանիտարական վերահսկողության ենթակա բույսերի, բուսական արտադրանքի և այլ կարգավորվող առարկաների արտահանումն առանց բուսասանիտարական անձնագրի:

3. Բույսերի վնասակար օրգանիզմների կարգավորման անհրաժեշտությունը որոշելու, անհրաժեշտության դեպքում դրանց դեմ պայքարի միջոցառումներ իրականացնելու նպատակով լիազոր մարմինն իրականացնում է բուսասանիտարական ուսումնասիրություն:

(12-րդ հոդվածը լրաց. 15.06.23 ՀՕ-220-Ն)

Հոդված 13. Բուսասանիտարիայի ոլորտում բույսեր, բուսական արտադրանք, կարգավորվող առարկաներ, պեստիցիդներ,

ագրոքիմիկատներ արտադրող, իրացնող, փոխադրող, ներմուծող, արտահանող, վերամշակող, պահեստավորող ֆիզիկական և իրավաբանական անձանց բուսասանիտարական հաշվառումը

1. Բուսասանիտարիայի ոլորտում բույսեր, բուսական արտադրանք, կարգավորվող առարկաներ, պեստիցիդներ և ագրոքիմիկատներ արտադրող, իրացնող, փոխադրող, ներմուծող, արտահանող, վերամշակող, պահեստավորող ֆիզիկական և իրավաբանական անձանց հաշվառում է լիազոր մարմինը՝ հաշվառման էլեկտրոնային համակարգում գրանցման և բուսասանիտարական հաշվառման վկայական տրամադրելու միջոցով:

2. Յուրաքանչյուր արտադրող, որի արտադրանքը նախատեսված է իրացման համար, հաշվառվում է լիազոր մարմնի կողմից, որի տվյալները գրանցվում են պաշտոնական գրանցամատյանում, և տրվում է հաշվառման չկրկնվող համար:

3. Սույն հոդվածով սահմանված դրույթները չեն կիրառվում այն բույսերի, բուսական արտադրանքի և այլ կարգավորվող ~~այլ~~ առարկաների փոքր քանակների նկատմամբ, որոնք նախատեսված են վերջինիս սեփականատիրոջ կամ ստացողի կողմից ոչ արդյունաբերական և ոչ առևտրային նպատակներով սպառման համար կամ փոխադրման ընթացքում սպառման համար, եթե առկա չէ վնասակար օրգանիզմների տարածման ռիսկ:

4. (մասն ուժը կորցրել է 07.07.22 ՀՕ-310-Ն)

Հոդված 14. Բուսասանիտարական անձնագիրը

1. Բուսասանիտարական անձնագիրը տրվում է միայն հաշվառված ֆիզիկական և իրավաբանական անձանց պատկանող բույսերի, բուսական արտադրանքի և այլ կարգավորվող ~~այլ~~ առարկաների համար՝ բուսասանիտարական զննման կամ

փորձաքննության արդյունքում և բուսասանիտարական կանոնների ու նորմերի բավարարման դեպքում:

2. Բուսասանիտարական հսկողության ենթակա բույսերը, բուսական արտադրանքը և այլ կարգավորվող ~~այլ~~ առարկաներն արգելվում է ներմուծել վնասակար օրգանիզմներից զերծ գոտի կամ տեղափոխել այդ գոտով, բացառությամբ եթե առկա է բուսասանիտարական անձնագիր տվյալ գոտու համար:

Գ Լ ՈՒ Խ 5

ԲՈՒՅՍԵՐԻ ԿԱՐԱՆՏԻՆԻ ՍԱՀՄԱՆՄԱՆ ԵՎ ՎԵՐԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ

Հոդված 16. Բույսերի կարանտինի սահմանումը

1. Հայաստանի Հանրապետության տարածքում բույսերի կարանտին վնասակար օրգանիզմների հայտնաբերման, մեկուսացման, վերացման և տարածման կանխարգելման նպատակով իրականացված բուսասանիտարական մշտադիտարկման և լաբորատոր փորձաքննության եզրակացության հիման վրա, կարանտին օրգանիզմից զերծ գոտում կարանտին վնասակար օրգանիզմով վարակվածություն հայտնաբերվելու դեպքում՝

1) լիազոր մարմնի որոշմամբ ստեղծվում է ժամանակավոր աշխատանքային խումբ, որտեղ ընդգրկվում են լիազոր մարմնի, պետական կառավարման ու տեղական ինքնակառավարման մարմինների, բուսասանիտարիայի ոլորտի գիտական կազմակերպությունների ներկայացուցիչներ.

2) ժամանակավոր աշխատանքային խումբը լիազոր մարմին է ներկայացնում առաջարկություններ՝ կարանտին գոտում իրականացվող միջոցառումների վերաբերյալ.

3) լիազոր մարմինը հաստատում է հայտնաբերված վնասակար օրգանիզմի անվանումը, դրանց տարածման սահմանները (արեալները), հնարավոր վնասի գնահատումը, կարանտինի և հարող տարածքների սահմանները, առաջարկվող միջոցառումների ցանկը և կարանտին սահմանելու վերաբերյալ առաջարկություն է ներկայացնում Կառավարություն՝ միաժամանակ ներկայացնելով սույն կետով նախատեսված փաստաթղթերը.

4) բույսերի կարանտինը սահմանվում է հանրապետության, մարզի, համայնքի, բնակավայրերի կամ ֆիզիկական ու իրավաբանական անձանց պատկանող տարածքում կամ դրանց մի մասում.

5) Հայաստանի Հանրապետության տարածքում կարանտին վնասակար օրգանիզմների տարածումը կանխելու նպատակով լիազոր մարմինը կարանտին գոտում իրականացնում է վերահսկողություն կարանտին վնասակար օրգանիզմների ոչնչացման և կարգավորվող առարկաների վարակազերծման բուսասանիտարական միջոցառումների անցկացման նկատմամբ:

2. Բույսերի կարանտին սահմանված գոտիներից բույսերը և բուսական արտադրանքը, սերմերը և տնկանյութը դուրս բերելը կատարվում է լիազոր մարմնի տված բուսասանիտարական անձնագրի առկայությամբ: Առանց բուսասանիտարական անձնագրի դուրս բերված ապրանքները ենթակա են վարակազերծման, անհրաժեշտության դեպքում՝ ոչնչացման:

3. Արգելվում են կարանտին վնասակար օրգանիզմներով վարակված բազմամյա տնկարկներին հարող տարածքներում տնկարանի հիմնումը և չհետազոտված տարածքներից պատվաստակալների և պատվաստացուների մթերումն ու օգտագործումը:

4. Տնկանյութի արտադրությամբ զբաղվող յուրաքանչյուր տնտեսավարող պետք է ունենա կարանտին հսկողության մատյան՝ աճեցված և իրացված տնկանյութի կարանտին հետազոտությունների արդյունքները և կարանտին վնասակար

օրգանիզմների բացակայության, բուսասանիտարական միջոցառումների վերաբերյալ տեղեկությունները գրանցելու համար:

5. Կարանտին սահմանված գոտում բուսասանիտարական հսկողության ենթակա բույսերի, բուսական արտադրանքի, սերմերի և տնկանյութի արտադրությամբ, մթերմամբ, փոխադրմամբ, պահեստավորմամբ և (կամ) իրացմամբ զբաղվող ֆիզիկական և իրավաբանական անձինք կարանտին վնասակար օրգանիզմի դեմ պայքարի միջոցառումները կազմակերպում և անցկացնում են վերահսկողություն իրականացնող մարմնի անմիջական հսկողության ներքո:

6. Եթե կարանտին սահմանված գոտում բուսասանիտարական զննումից և (կամ) փորձաքննությունից պարզվել է, որ արտադրողի արտադրած, օգտագործած կամ պահեստավորած բույսերի, բուսական արտադրանքի և այլ կարգավորվող ~~այլ~~ առարկաների որոշակի խմբաքանակ առողջ է և վնասակար օրգանիզմների տարածման ռիսկ չի ներկայացնում, ապա բուսասանիտարական անձնագիրը լրացվում է միայն տվյալ խմբաքանակի համար:

(16-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-287-Ն)

Հոդված 17. Բույսերի կարանտինի գոտում կիրառվող պայքարի միջոցառումները, կարանտինի չեղյալ հայտարարումը

1. Բույսերի կարանտինի գոտում իրականացվում են բույսերի, բուսական արտադրանքի և այլ կարգավորվող ~~այլ~~ առարկաների պարտադիր ախտահանում (վարակազերծում) կամ ոչնչացում:

Բույսերի կարանտինի գոտում սահմանափակվում կամ արգելվում են բույսերի, բուսական արտադրանքի և այլ կարգավորվող ~~այլ~~ առարկաների արտածումը, ինչպես նաև դրանց հետ առնչվող փոխադրամիջոցների ելքն ու մուտքը:

2. Բուսասանիտարական վերահսկողություն իրականացնելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձը պարտավոր է կարանտին գոտում ֆիզիկական և իրավաբանական

անձանց տալ առաջադրանքներ սույն օրենքի պահանջների կատարման վերաբերյալ և հսկողություն իրականացնել դրանց կատարման նկատմամբ:

3. Բույսերի կարանտինը չեղյալ է հայտարարվում լիազոր մարմնի առաջարկությամբ՝ համապատասխան միջոցառումների իրականացման և վնասակար օրգանիզմի օջախների ոչնչացման դեպքում, ինչպես նաև Կառավարության սահմանած այլ դեպքերում:

4. Բույսերի կարանտինի սահմանման և կարանտինի չեղյալ հայտարարման մասին տեղեկությունները տրվում են զանգվածային լրատվության միջոցներով:

(17-րդ հոդվածը փոփ. 23.03.18 ՀՕ-287-Ն)

Գ Լ ՈՒ Խ 6

ԲՈՒՅՍԵՐԻ, ԲՈՒՍԱԿԱՆ ԱՐՏԱԴՐԱՆՔԻ ԵՎ ԱՅԼ ~~ԱՅԼ~~ ԿԱՐԳԱՎՈՐՎՈՂ ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՎԱՐԱԿԱԶԵՐԾՈՒՄՆ ՈՒ ՈՉՆՉԱՑՈՒՄԸ

Հոդված 18. Բույսերի, բուսական արտադրանքի և այլ ~~այլ~~ կարգավորվող առարկաների վարակազերծումն ու ոչնչացումը

1. Բույսերի կարանտին վնասակար օրգանիզմների մուտքը, տարածումն ու վարակի օջախները վերացնելու նպատակով բուսասանիտարական փորձաքննության արդյունքում բուսասանիտարական վերահսկողություն իրականացնելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի տված եզրակացության հիման վրա վարակակիր կամ հիվանդության կասկած առաջացնող բույսերը, բուսական արտադրանքը և այլ կարգավորվող ~~այլ~~ առարկաները վարակազերծվում կամ ոչնչացվում են՝ բուսասանիտարական կանոններին համապատասխան՝ բուսասանիտարական վերահսկողություն իրականացնելու իրավասություն ունեցող պաշտոնատար անձի հսկողությամբ:

2. Բույսերի, բուսական արտադրանքի և այլ կարգավորվող ~~այլ~~ առարկաների վարակազերծման անհրաժեշտությունը, կատարման վայրը և եղանակը որոշում է բուսասանիտարական լիազոր մարմնի պաշտոնատար անձը:

3. Բույսերի, բուսական արտադրանքի և այլ կարգավորվող ~~այլ~~ առարկաների վարակազերծման և ոչնչացման հետ կապված ծախսերը կատարվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով: